ՀԵՏԱՔՐՔՐՎԱԾՈՒԹՅԱՆ ՀԱՅՏԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ՀՐԱՎԵՐ

(ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ - ԱՆՀԱՏ ԽՈՐՀՐԴԱՏՈՒԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆ)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՂՔԱՏ և ԿԱՐԻՔԱՎՈՐ ԱՆՁԱՆՑ ԿԵՆՍԱՄԻՋՈՑՆԵՐԻ ԲԱՐԵԼԱՎՈՒՄ

ԴՐԱՄԱՇՆՈՐՀ՝ TF 013894

Նշանակման անվանումը՝ Խորհրդատու – մասնագիտական աջակցություն բարեգործական ճաշարանների աշխատակազմին և վերահսկողություն

Հղման թվակիր համարը /ըստ Գնումների պլանի/՝ **SLVPVP -C- 3.2.5**

«Առաքելություն Հայաստան» բարեգործական հասարակական կազմակերպությունը Ճապոնիայի Սոցիալական Զարգացման Հիմնադրամից Համաշխարհային բանկի միջոցով ստացել է ֆինանսավորում «Հայաստանի աղքատ և կարիքավոր անձանց կենսամիջոցների բարելավում» ծրագրի իրականացման համար և նպատակ ունի ծրագրի միջոցների մի մասն օգտագործել ծրագրի սննդի մասնագետ-խորհրդատուի /հետայսու՝ Խորհրդատու/ խորհրդատվական ծառայություններ մատուցելու դիմաց։

Խորհրդատվական ծառայությունները («Ծառայություններ») ներառում են. մասնագիտական աջակցության ցուցաբերում ծրագրի բոլոր մարզերում գործող բարեգործական ճաշարանների աշխատակազմին և ճաշարանների գործունեության ու սանիտարա-հիգիենիկ կանոնների պահպանման վերահսկողության իրականացում՝ հաշվետու լինելով ծրագրի համակարգողին։

Խորհրդատուն լրիվ դրույքով պաշտոն է, աշխատավայրը՝ «Առաքելություն Հայաստան»-ի Կենտրոնական գրասենյակ։ Խորհրդատուն վարձվելու է մեկ տարի ժամկետով՝ ևս երկու տարվա հնարավոր երկարաձգմամբ՝ կախված պարտականությունների կատարման արդյունքներից։

Խորհրդատուն պետք է.

- Կատարի ստուգայցեր ծրագրի բարեգործական ճաշարանները՝ անձնակազմի կողմից ճաշարանների սանիտարա-հիգիենիկ նորմերի և աշխատակիցների անձնական հիգիենայի կանոնների պահպանումը ստուգելու համար,
- Բարեգործական ճաշարանների աշխատակազմին ցուցաբերի մասնագիտական աջակցություն՝ բարեգործական ճաշարանների գործունեությանն առնչվող տարբեր հարցերի և պահանջվող սանիտարա-հիգիենիկ նորմերի պահպանման վերաբերյալ,
- Վերահսկի բարեգործական ճաշարանների աշխատակազմի կողմից ճաշարանի բոլոր հատվածներում մաքրության կանոնների պահպանումը,
- Մշտադիտարկի բարեգործական ճաշարաններում պահվող սննդամթերքի պահեստավորման նորմերը,
- Մասնակցի բարեգործական ճաշարանների աշխատակազմի պարբերաբար գումարվող ժողովներին՝ մասնագիտական տարբեր խնդիրներ պարզաբանելու և շահառուների սպասարկմանն առնչվող հարցեր քննարկելու համար։

«Առաքելություն Հայաստան»-ը վերոնշյալ պահանջներին համապատասխանող անհատ խորհրդատուներին հրավիրում է ներկայացնել Ծառայությունների մատուցման հետաքրքրվածության հայտ։ Հետաքրքրված անհատ խորհրդատուները պետք է տրամադրեն տեղեկություններ՝ ցույց տալով,

որ վերոնշյալ Ծառայությունների մատուցման համար իրենք ունեն պահանջվող որակավորումները և համապատասխան փորձ:

Ընտրության չափանիշներն են.

- Բարձրագույն կրթություն
- Հանրային սննդի ուղեցույցների, սանիտարա-հիգիենիկ և սննդի անվտանգության կանոնների իմացություն,
- Աշխատանքային փորձ տվյալ բնագավառում,
- Հայաստանի վեց մարզերում ծրագրով նախատեսված բոլոր շրջաններ ինտենսիվ գրաֆիկով ամսական ստուգայցեր կատարելու կարողություն,
- Հաշվետվություններ կազմելու կարողություն և համակարգչային հմտություններ (Word, Excel):

Հետաքրքրված անհատ խորհրդատուների ուշադրությունը հրավիրվում է Համաշխարհային բանկի Ուղեցույցների 1.9 պարագրաֆին՝ ՀԲ վարկառուների կողմից խորհրդատուների ընտրություն և վարձում. 2011 թ. հունվարին ՎԶՄԲ փոխառությունների և ՄԶԸ վարկերի և դրամաշնորհների շրջանակներում /«Խորհրդատուի ուղեցույց»/ սահմանված շահերի բախման վերաբերյալ Համաշխարհային բանկի քաղաքականությանը: /www.worldbank.org/procure/.

Խորհրդատուի ընտրությունը իրականացվելու է Բաժին V-ում ներկայացված Անհատ խորհրդատուների ընտրության ընթացակարգերի համաձայն: /www.worldbank.org/procure/

Հավելյալ տեղեկությունների համար դիմել ստորև ներկայացված Էլ. հասցեով աշխատանքային ժամերին՝ 09:00-ից - 18:00:

Հետաքրքրվածության հայտերը պետք է ներկայացվեն գրավոր՝ էլեկտրոնային փոստով մինչև 2014 թվի օգոստոսի 07-ը, ժամը 18:00-ն՝ ստորև ներկայացված Էլ. հասցեով.

Hr.Legal@ngo.mission.am

«Առաքելություն Հայաստան» բարեգործական հասարակական կազմակերպության Կադրերի բաժնի ղեկավար Ալլա Հարությունյանին